Կենդանիների արածեցումը՝
կենսաբազմազանության կարիքների,
կենդանու կարիքների,
արոտի արտադրողականության և
արոտօգտագործողների պահանջների միջև
հավասարակշռվածություն ապահովող
գործընթացն է

ԱՐՈՏԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

SDA Strategic Development Agency
Strategies for Development

Ինչի՞ համար է կարևոր արոտի կառավարումը

Արոտավայրը էկոլոգիական և արտադրական նշանակությամբ բնական ռեսուրս է: Այն օգտագործվում է ոչ միայն գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար, այլ նաև միջավայր է, որտեղ իրենց զարգացումն են ապրում բուսական և կենդանական աշխարհի տարատեսակ ներկայացուցիչներ: Արոտավայրերն օգտագործվում են նաև մեղվաբուծության, որսորդության, դեղաբույսերի հավաքման, զբոսաշրջության և հանգստի նպատակով: Մեծ է նաև արոտավայրերի դերը շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պահպանման գործում:



Արոտային ժամանակահատվածում է ստացվում կենդանիների տարեկան կաթնատվության 60-70%-ը: Միևնույն ժամանակ՝ արոտային կանաչի ինքնարժեքն ավելի ցածր է, քան այլ կերակրատեսակներինը, հետևաբար արոտային շրջանում արտադրվող կաթի ինքնարժեքն ավելի ցածր է: Բացի այս, կանաչ արոտային կերը պարունակում է հանքային նյութեր և վիտամիններ, ինչը դրական է ազդում կենդանիների առողջության վրա՝ բարելավվում է նյութափոխանակությունը, լավանում է սրտի, մարսողական ու շնչառական համակարգերի աշխատանքը, արդյունքում՝ բարձրանում է ստացված արտադրանքի որակը: Ուստի, ակնհայտ է արոտային ժամանակահատվածի երկար և լիարժեք օգտագործման անհրաժեշտությունը:

Չնայած արոտավայրերի կարևորությանը՝ դրանց արտադրողականությունը տարեց տարի ընկնում է մարդու կողմից ոչ արդյունավետ և տարերային օգտագործման արդյունքում: Չկարգավորվող արածեցումների արդյունքում հողը տրորվում է, փոխվում են նրա ֆիզիկական հատկությունները, խախտվում են նրա ջրային, օդային և սննդարար ռեժիմները: Սրա հետևանքով փոխվում է բուսական ծածկույթի որակը, արոտավայրում նվազում են բարձրարժեք բուսատեսակների քանակը և զարգանում են ցածրարժեք բուսատեսակները: Արդյունքում **կտրուկ նվազում է արոտավայրերի բերքատվությունն ու որակը՝ բացասական անդրադառնալով անասնաբուծական արտադրանքի ծավալի վրա:**

Արոտավայրի արտադրողականության պահպանման և վերականգնման համար լավագույն տարբերակ է արոտի կայուն կառավարումը, ինչը քիչ ծախսատար և բարձր արդյունավետություն ապահովող միջոց է:

Արոտավայրը նախքան դեգրադացումը

Արոտավայրը դեգրադացումից հետո

Ի՞նչ է ներառում արոտի կառավարումը

Արոտի կառավարման յուրաքանչյուր մոդելի կիրառման նպատակը պետք է լինի արոտի որակի պահպանումն ու բարելավումը: Բնությունը կարգավորում է արոտավայրերում տեղի ունեցող բնական գործընթացները, իսկ արոտօգտագործողներին մնում է արոտի կայուն օգտագործմամբ **չխոչընդոտել բնությանը**: Վաղ գարնանային արածեցումը, արոտային շրջանի ուշ ավարտը, գերարածեցումներն ու թերարածեցումները խախտում են արոտային որակյալ բույսերի վեգետացիայի ժամկետները, ինչը բացասաբար է ազդում արոտականաչի քանակի, որակի և տեսակային կազմի վրա:

Չնայած արոտավայրերի կարևորությանը՝ դրանց արտադրողականությունը տարեց տարի ընկնում է մարդու կողմից ոչ արդյունավետ և տարերային օգտագործման արդյունքում: Չկարգավորվող արածեցումների արդյունքում հողը տրորվում է, փոխվում են նրա ֆիզիկական հատկությունները, խախտվում են նրա ջրային, օդային և սննդարար ռեժիմները: Սրա հետևանքով փոխվում է բուսական ծածկույթի որակը, արոտավայրում նվազում են բարձրարժեք բուսատեսակների քանակը և զարգանում են ցածրարժեք բուսատեսակները: Արդյունքում **կտրուկ նվազում է արոտավայրերի բերքատվությունն ու որակը՝ բացասական անդրադառնալով անասնաբուծական արտադրանքի ծավալի վրա:**

Արոտավայրի արտադրողականության պահպանման և վերականգնման համար լավագույն տարբերակ է արոտի կայուն կառավարումը, ինչը քիչ ծախսատար և բարձր արդյունավետություն ապահովող միջոց է:

Արոտավայրը նախքան դեգրադացումը

Արոտավայրը դեգրադացումից հետո

Ի՞նչ է ներառում արոտի կառավարումը

Արոտի կառավարման յուրաքանչյուր մոդելի կիրառման նպատակը պետք է լինի արոտի որակի պահպանումն ու բարելավումը: Բնությունը կարգավորում է արոտավայրերում տեղի ունեցող բնական գործընթացները, իսկ արոտօգտագործողներին մնում է արոտի կայուն օգտագործմամբ **չխոչընդոտել բնությանը**: Վաղ գարնանային արածեցումը, արոտային շրջանի ուշ ավարտը, գերարածեցումներն ու թերարածեցումները խախտում են արոտային որակյալ բույսերի վեգետացիայի ժամկետները, ինչը բացասաբար է ազդում արոտականաչի քանակի, որակի և տեսակային կազմի վրա:

Արոտավայրերի արդյունավետ կառավարման իրականացումը թույլ է տալիս՝

1. Ապահովել բուսական և կենդանական աշխարհի միջև առկա փոխադարձ կայունությունն ու օրինաչափությունը՝ նպաստելով կենսաբազմազանության պահպանմանը և կենդանական ու բուսական աշխարհի ինքնակարգավորմանը և ինքնավերականգնմանը:



2. Երկարացնել արոտային շրջանը և նվազեցնել մսուրային շրջանի տևողությունը: Ինչի արդյունքում՝
   - *նվազում են մսուրային ժամանակահատվածի կերի համար կատարվող ծախսերը;*
   - *խնայողություն է արվում կերի կուտակման համար աշխատող գյուղ. տեխնիկայի, վառելիքի և այլ ծախսերի ուղղությամբ;*
   - *բարելավվում է տնտեսությունների սանիտարական վիճակը՝ նվազեցնելով գոմաղբի հեռացման անհրաժեշտությունն ու պահանջվող աշխատուժը:*
3. Բարձրացնել հիվանդությունների նկատմամբ կենդանիների դիմացկունությունը, ինչը բարձրացնում է դրանց տնտեսական օգտագործման միջին ժամանակահատվածը, նվազեցնում է անասնաբուժական ծառայությունների և դեղամիջոցների վրա կատարվող ծախսերը և ապահովում է առողջ սերունդ:

Ինչի՞ց սկսել...

Արոտների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է.

1. **Տեղեկատվություն հավաքել** հասանելի արոտավայրերի տարածքի և բուսական ծածկույթի վերաբերյալ:
2. Ծանոթանալ արոտավայրում **ենթակառուցվածքների առկայությանը**: Կարևոր է հիշել, որ բարձր կաթնատվության համար կենդանին արոտավայրում պետք է ունենա ջուր խմելու հնարավորություն:
3. Հաշվարկել արոտային ժամանակահատվածի համար **պահանջվող արոտավայրերի քանակը**՝ ըստ ունեցած գլխաքանակի:

Սովորաբար 1 պայմանական խոշոր կենդանուն ողջ արոտային շրջանի ընթացքում պահանջվում է միջինում 1-1,5 հա արոտավայր, սակայն արոտավայրերի բերքատվությունից կախված՝ ցուցանիշը տատանվում է:

Կենդանու կերի պահանջ ողջ արոտային շրջանի համար (կգ/գլուխ) ÷ Արոտի միջին բերքատվություն (կգ/հա) = Արոտի պահանջ ողջ արոտային շրջանի համար (հա/գլուխ)

4. Անհրաժեշտ է հիշել, որ արոտային շրջանը սկսվում է բույսերի վերաճից 15-18 օր հետո, երբ խոտածածկի բարձրությունը հասնում է 6-10սմ-ի՝ կախված գոտիականությունից, և ավարտվում է ցրտերի սկսվելուց 20-25 օր առաջ:
5. Ծանոթանալ համայնքում արոտավայրերի օգտագործումն ու կառավարումը կարգավորող իրավական դաշտին, մասնավորապես՝ ՏԻՄ-ի կողմից հաստատված արոտօգտագործման կարգին և սահմանված վարձավճարներին:
6. Համայնքում գործող ընթացակարգին համաձայն՝ **դիմել համայնքապետարան** և տեղեկացնել, թե որ հատվածում եք նախատեսում արածեցում կազմակերպել:
7. Անհրաժեշտության դեպքում **կնքել արոտի օգտագործման պայմանագիր** և կատարել անհրաժեշտ վճարումները, ինչը թույլ կտա համայնքապետարանին ապահովել արոտում ենթակառուցվածքների շահագործումը և նորերի ստեղծումը:

8. **Հետևել կենդանիների արածեցման գործընթացին**՝ ուշադրություն դարձնելով տարածքում բուսածածկի վիճակին: Անհրաժեշտ է հիշել, որ արածեցումը տվյալ հանդամասում պետք է դադարեցնել, երբ մնում է 4-6սմ բարձրությամբ խոտ:

Դադարեցնել արածեցման գործընթացը, երբ արոտավայրում մնում է 4-6 սմ բարձրությամբ խոտ



9. Գնահատել մսուրային ժամանակահատվածի կանխատեսվող տևողությունը և հաշվարկել մսուրային ժամանակահատվածի համար անհրաժեշտ կերի ծավալը:
10. Հնարավորության դեպքում կազմակերպել **անասնակերի արտադրություն**՝ մսուրային ժամանակահատվածի համար կենդանիներին ապահովելով կայուն կերի բազա:

ԱՐԱԾԵՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Գարնանն արածեցման շրջանի մեկնարկի ժամկետների պահպանումը բույսերին հնարավորություն է տալիս անցնել վեգետացիայի անհրաժեշտ այն փուլերը, որոնց ժամանակ արոտավայրերում ձևավորվում է կենդանիների արածեցման համար անհրաժեշտ բավարար քանակությամբ արոտականաչ:

Գարնանային վաղ արածեցումը խոչընդոտում է բույսերի հասունացմանն ու կանաչ զանգվածի ձևավորմանը և ստեղծում է զգայուն բուսատեսակների վերացման վտանգ:

Ամռանը արածեցման ժամկետների պահպանումը արոտականաչին հնարավորություն է տալիս վերականգնվելու և նույն տարում հյուսիսային ու արևելյան կողմնադրություն ունեցող լանջերում կրկնակի արածեցման հնարավերություն է ստեղծվում:

Ամռան ընթացքում *գերարածեցումը* խոչընդոտում է բույսերի վերաճի հնարավորությանը, իսկ *թերարածեցումը* նպաստում է արոտավայրերի ճմակալմանը:

Աշնանը ցրտերի ընկնելուց 18-20 օր առաջ արածեցումը դադարեցնելը բույսերին հնարավորություն է տալիս արմատային համակարգում կուտակել սննդարար նյութեր, որոնք ապահովում են բույսերի գարնանային վերաճը:

Ուշ աշնանային արածեցումը բույսերին զրկում է արմատային համակարգում համապատասխան քանակությամբ սննդարար նյութեր կուտակելու հնարավորությունից, ինչն արտահայտվում է բույսերի գարնանային թույլ վերաճով և ցածր բերքատվությամբ:

Նշված միջոցառումների իրականացումը թույլ կտա բարձրացնել կենդանիների մթերատվությունը, բարելավել բնակչության պարենային ապահովվածությունը, ավելացնել անասնապահությամբ զբաղվող ընտանիքների եկամուտները, ինչն էլ կնպաստի սոցիալական խնդիրների թեթևացմանը:

ԼԱՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Շատ համայնքներ, իրենց բնակավայրերում արոտների կառավարումը պլանավորելիս հաշվի են առնում նաև խոտհարքների և վարելահողերի առկայությունը, որտեղ բերքահավաքից հետո կազմակերպվում է արածեցում, ինչը դիտվում է որպես հավելյալ կերի աղբյուր:

ԴԱՇՏԸ ՄԻ՛ ԱՅՐԵՔ

Սանիտարական նպատակով այրելով խոտածածկը՝ մեծ վնաս է հասցվում հատկապես միամյա խոտաբույսերին՝ այրվում են բույսի վերգետնյա զանգվածն ու սերմերը: Արդյունքում գարնանը նկատվում է բույսերի որոշ տեսակների քանակի նվազում:
Այրվում է հումուսի շերտը և հողում գտնվող օրգանական նյութերը: Կրակը ոչնչացնում է հողում բնակվող կենդանիներին՝ միջատներին և միկրոօրգանիզմներին, որոնք մասնակցում են հողագոյացման գործընթացին, նպաստում են օրգանական նյութերի քայքայմանը, նպաստում են հողի օդա- և ջրա- թափանցելիությանը:

ՋՐԻ ՍՊԱՌՈՒՄ ԵՎ ԿԱԹՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1 ԼԻՏՐ ԿԱԹ
արտադրելու համար անհրաժեշտ է
3 ԼԻՏՐ ՋՈՒՐ

Բարձր կաթնատվություն ունեցող կովերին օրական անհրաժեշտ է ավելի քան 150 լիտր ջուր





Ջրի սպառման 40 տոկոսով կրճատումը նվազեցնում է կաթնատվությունը 25 տոկոսով